



տնային գործերուն,- ապա՝ դառնալով Սամուելին ըսաւ.

- Կը յիշե՞ս բաղիկը...

Սամուել զարմացաւ եւ հասկցաւ, որ Մարին տեղեակ է իր գաղտնիքին, հետեւաբար՝ գաղտնիքը պահելու սիրոյն, ինք ստիպուած էր գործադրել ամեն բան որ կը պահանջուէր իրմէ, առանց տատամսելու:

Աւելի ուշ երեկոյեան, մեծ հայրիկը փոքրիկներուն հարցուց, թէ կը փափաքի՞ն իր հետ ձկնորսութեան մեկնիլ, սակայն մեծ մայրիկը ըսաւ թէ ինք Մարին կարիքը ունի՝ ընթրիք պատրաստելու: Մարին յանկարծ դարձաւ մեծ մայրիկին ու ըսաւ.

- Այո՛, ես հարց մը չունիմ: Սակայն Սամուելը ըսաւ թէ ինք կ' ուզէ քեզի օգնել ընթրիքը պատրաստելու համար,- ու կրկին մօտեցաւ Սամուելին ըսելով.

- Կը յիշե՞ս բաղիկը...

Այսպիսով՝ Մարին մեկնեցաւ մեծ հոր հետ ձկնորսութեան, իսկ խեղճ Սամուելը մնաց մեծ մօրը քով:

Անցան օրեր եւ Սամուել յոգնեցաւ Մարին շահագործութենէ: Վերջապէս որոշեց երթալ մեծ մայրիկին մօտ եւ պատահածը պատմել: Երբ մեծ մայրիկը ականջ տուաւ զայն խօսքերուն, ժպտաց, փաթեց Սամուելը եւ ըսաւ.

- Իմ սիրելի՛ տղաս, գիտեմ, ես ալ քեզ պատուհանէն կը հետապնդէի: Բայց որովհետեւ կը սիրեմ քեզ, ներքցի: Պարզապէս կը սպասեի, թէ մինչեւ ե՞րբ պիտի դիմանաս Մարին շահագործումին:

Սամուել նախ ներողութիւն խնդրեց մեծ մայրիկէն, ետքը վազեց ու քարարձակը աղբամանին մէջ նետեց, խոստանալով անգամ մըն ալ այսպիսի վտանգաւոր առարկայ չգործածել՝ զբաղումի նպատակով:

Սամուելն ու Մարին բացառիկ արձակուրդ մը անցուցին եւ երկուքն ալ շա՛տ բան սորվեցան այդ տարի:

ՔԱՐԱՐՁԱԿՈՎ ՓՈՔՐԻԿԸ



Ժամանակին, կար ու չկար Սամուել ու Մարի անունով քոյր ու եղբայր կային:

Սամուելն ու Մարին մեկնեցան իրենց մեծ հոր եւ մեծ մօր գիւղը՝ ամառնային արձակուրդը վայելելու: Սամուել իր քարարձակը առաւ եւ հեռացաւ ծառերուն մէջ: Ան կ' ուզէր մարգուիլ եւ վարպետ նշանառու դառնալ: Սակայն բոլոր փորձերը ի զուր եղան: Ծա՛տ կը փորձէր, բայց նշանակետին իսկ չէր մօտենար:

Կեսօրին, մեծ մայրիկը ներսէն ձայն տուաւ.

- Սամուել՛, ճաշը պատրաստ է:

Քիչ մը յուսալքուած, Սամուել որոշեց տուն դառնալ ճաշելու, սակայն ճամբան նկատեց մեծ մայրիկին ընտանի կենդանին՝ բարի եւ սիրունիկ բաղիկը: Սամուել ոգեւորուած արագօրէն գրպանէն հանեց իր քարարձակը եւ ուղղեց դէպի խեղճ բաղիկը: Ան ճիշդ նշան առած էր թիրախին...

Սամուել վախցած եւ միեւնոյն ժամանակ ապշած վիճակի մէջ էր: Ան պատահածէն սոսկալով, առաւ սպանուած բաղը եւ պահեց անտառի ծառերուն մէջ:

Մարին՝ Սամուելին քոյրը, ամեն բան տեսած էր պատուհանէն: Սակայն որոշած էր լուռ մնալ եւ չբացայայտել զայն:

Յաջորդ օր, մեծ մայրիկը Մարիէն օգնութիւն խնդրեց աղտոտ պնակներն ու գաւաթները լուալու: Մարին աճապարանքով պատասխանեց.

- Բայց, մեծ մայրի՛կ, Սամուելը ըսաւ թէ ինք կը փափաքի քեզի օգտակար դառնալ բոլոր

ԹԻՒՄ ԴԱՏԱՍՏԵՑՈՒՄ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՐԳԱՍՈՐԵՑՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՒ ԲՆԱԿԱՆՈՒՄ

$5+5$

$8+1$

$2+5$

$2+4$


$5+4$

$7+3$

$3+3$

$4+3$

Միացր՛ւր նոյն պատասխանը ունեցող տուփիկները:



Նախասիրած գոյներովդ գունաւորե՛ հետեւեալ պատկերը:



:



:



:



:



:



:



:



:

Ժամը քանի՞ է:

Տառերը իրենց ճիշդ տեղերը դնելով բառեր կազմե՛:

ն ք ի ա ն ր ժ ա շ
ո կ տ ա լ
ռ ա թ ո
.....

աւելի՛ 'ւստոյ' հ'սմոշոյժիկ :դմոյոտտոն

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՇԻՇԸ (ԻՐԼԱՆՏԱԿԱՆ ՅԵՔԻԱԹ)

Դուրսի դռնն կինը դիմաւորեց զինք:

- Շուտ վերադարձար. ո՞ւր է կովը:
- Տախեցի, սիրելի՛ս:
- Այսպէս շո՛ւտ, բայց ի՞նչն է, որ կը տեսնեմ վերարկուիդ տակ:

- Այն՝ ինչ որ ստացայ իբրեւ կովուն փոխարժէք:
- Այս որքա՛ն շատ վճարեր են քեզի, գրպանդ նեղ կու գայ այդ դրամներուն համար: Շո՛ւտ հանէ՛, որ հաշուենք: Եւ հազիւ Պատրին գրպանէն շիշը հանեց, կինը տեղը սառած մնաց. ան քիչ մնաց պիտի մարեր: Ապա սկսաւ կմկմալ:

- Ճի՞շդ կը խօսիս, թէ կը կատակես: Մեր միակ եւ արժէքաւոր կովուն փոխարէն, ասիկա՞՛ բերիր:

Այն ատեն Պատրին ամբողջ պատմութիւնը պատմեց կնոջ: Կինը շատ չհաւատալով, բայց ուրիշ ճար ալ չունենալով, ոտքի ելաւ եւ սկսաւ ըսուածները գործադրել պարզապէս գոհացում տալու իր խեղճ ամուսնոյն: Երբ կատարեց ամեն բան, ոյժը հաւաքեց եւ ըսաւ.

- Պարտականութիւնդ կատարէ՛, ո՛վ շիշ:

Կրնա՞ք երեւակայել թէ ի՞նչ մեծ եղաւ երկու յուսահատ ամուսիններուն զարմանքը, երբ իրենց աչքերուն առջեւ երկու թզուկներ ելան շիշէն եւ վայրկեանի մը մէջ սեղանը ոսկիի եւ արծաթի կտորներով եւ համեղ կերակուրներով լեցուցին:

Եւ երբ իրենց պարտականութիւնը կատարեցին՝ շիշէն ներս մտան:

Այն ատեն Պատրին եւ կինը կանչեցին իրենց փոքրիկները եւ ուրախ-գուարթ ճաշակեցին ուտելիքները:

Այս հանգիստ կեանքը շարունակուեցաւ մինչեւ որ տանտէրը օր մը այցելեց իրենց տունը: Ան իր հարցումներով ձանձրացուց Պատրին, որ նախ չուզեց իր գաղտնիքը բացայայտել, սակայն ա՛լ չդիմանալով, պատմեց ինչ որ պատահեցաւ իրեն:

Հողատէրը հաւնեցաւ կախարդական շիշը եւ այնպէս ձեւացուց, թէ չի հաւատար Պատրին պատմածներուն.

- Ես մինչեւ որ անձնապէս չփորձեմ, չեմ հաւատար որ այսպէս բան մը կրնայ պատահիլ:

Ապա, պնդեց որ Պատրին վարձու տայ իրեն այդ շիշը, փոխան խոշոր գումարի մը: Պատրին մերժեց առաջարկը: Հողատէրը բազմապատկեց զինք: Պատրին կրկին մերժեց: Հողատէրը իրապէս խոշոր գումար մը առաջարկեց, պնդեց եւ շատ աղաչեց, որ քանի մը օրուան համար շիշը իրեն փոխ տան:

Պատրին շլացաւ գումարէն եւ չկրցաւ մերժել հողատիրոջ առաջարկը եւ ինքզինք համոզեց մտածելով.

- Ամենայնդէպս հարուստ մարդ մըն եմ եւ ունեցածս կը բաւէ ինծի մինչեւ կեանքիս վերջը:

Ինչպէս կրցաք գուշակել, Պատրին սխալեցաւ եւ հողատէրը շիշը չվերադարձուց անոր:



Այս կարգադրութենէն ետք, օրերու ընթացքին հարստութիւնը անհետացաւ եւ Պատրին նորէն սկսաւ աղքատութենէ տառապիլ:

Օր մը որոշեց նոյն ճամբայէն քալել եւ հասնիլ հոն, ուր հանդիպած էր մարդուն: Երբ հասաւ խիտ ու մութ ծառերուն մօտ, յանկարծ հանդիպեցաւ անոր: Մարդը սկսաւ առանց նախաբանի իր հետ խօսիլ:

- Է՛հ, Պատրի՛, հիմա հարուստ մարդ մը եղար, տեսա՞ր: Պատրին պատասխանեց տխուր շեշտով մը.

- Ճիշդ է, որ շրջան մը հարստացայ, բայց հիմա նախկին աղքատ գիւղացին եմ, - ու պատմեց թէ ինչպէս սխալած էր ու իր գաղտնիքը շիշին հետ միասին տուած՝ տանտիրոջ:

Այն ատեն մարդը երկրորդ կանաչ շիշ մըն ալ հանեց եւ ըսաւ.

- Ահաւասիկ երկրորդ շիշ մը, որ քեզի պիտի տամ:

Պատրին ուրախութենէն շիշը փախցուց եւ հեւասպառ հասաւ տուն:

Պրիծիթը հազիւ երկրորդ շիշը տեսաւ, մեծ ուրախութեամբ տունը աւլեց, մաքուր ծածկոցով մը ծածկեց սեղանը եւ ըստ իրենց գիտցածին միասնաբար արտասանեցին ծանօթ նախադասութիւնը:

Այս անգամ սակայն երկու քաջեր դուրս եկան շիշէն, ձեռքերին՝ մեկական գաւազան ու սկսան անխնայ ծեծել երկու միամիտ ամուսինները:

Երբ երկու քաջերը ծեծելէն յոգնեցան կորսուեցան շիշին մէջ:

Պատրին ու Պրիծիթը ցաւէն սաստիկ կը տառապէին: Օրեր ետք երբ առողջացան,

Պատրին գաղափար մը յղացաւ: Երկրորդ շիշը առաւ եւ գնաց հողատիրոջ մօտ եւ համոզեց, որ գնէ զայն:

Ազահութիւնը շլացուց հողատէրը, որ չտատամսեցաւ ընդունիլ առաջարկը: Բայց երբ սկսաւ փորձել նոր շիշի գործածութիւնը, երկու քաջերը ելան մէջէն եւ սկսան անխնայ ծեծել զինք: Հողատէրը սարսափելի հարուածներուն տակ սկսաւ «օգնութի՛ւն» պոռալ:

Պատրին խնդրեց, որ ձեւ մը գտնէ եւ զինք ազատէ:

Այն ատեն Պատրին ըսաւ.

- Մինչեւ որ առաջին շիշը չտաս, չեմ կրնար օգնել քեզի:

- Արդէն քուկդ էր. հոն է, դարակին մէջ, ա՛ն, վերցո՛ւր ու զիս ազատէ՛:

Պատրին առաւ շիշը եւ վերադարձաւ տուն: Հազիւ այս մէկը ըրած էր, երկու քաջերը ծեծելէն յոգնած, կրկին մտան իրենց շիշին մէջ:

Յետոյ հողատէրը հիւանդացաւ, բայց Պատրին կրկին հարստացաւ՝ իր առաջին շիշին թզուկներուն շնորհիւ:

Այնուհետեւ մարդու չտուաւ իր գաղտնիքը եւ ոչ ալ չափազանցեց կախարդական շիշի գործածութիւնը:

(Վերջ)



ԽԱԾԿՏԻԿ



Խածկտիկը վառ գոյներով ուտապատրիչ արտաքինով փոքրիկ թռչուն մըն է: Անոր մէջքը լայն է: Պոչիկին ու թելերուն գոյնը՝ սեւ, իսկ կուրծքը, այտերն ու վիզը վառ կարմիր են: Գլուխն ալ զարդարուած է սեւ գլխարկով մը: Այս թռչունը յատկապէս ձմրան նկատելի կ'ըլլայ՝ ձիւնասափտակ ծառերու վրայ:

Խածկտիկները խիտ անտառներու մէջ կ'ապրին, սակայն ձմրան անոնք կը փոխադրուին դէպի քաղաքի պուրակները՝ կեր ապահովելու համար:

Ամրան դժուար է խածկտիկ գտնելը, ահա թէ ինչո՞ւ մարդիկ կը կարծեն, թէ անոնք գաղթած կ'ըլլան ուրիշ երկիրներ: Իրականութիւնն այն է, որ խածկտիկները երբեք չեն լքեր իրենց հարազատ վայրերը, պարզապէս գարնան անոնք կը փոխադրուին խիտ անտառներու ծառերուն մէջ, որպէսզի բոյն շինեն եւ շատնան:

Խածկտիկին բոյնը ընդհանրապէս կը գտնուի բարձր ու խիտ ծառերու վրայ:

Խածկտիկին եզր կ'ածէ 4-6 կապոյտ հաւկիթներ՝ մօտաւորապէս երկու շաբաթ անոնց վրայ նստելէ ետք: Իսկ արուն այդ ամբողջ ընթացքին կեր կ'ապահովէ անոր:

Նոր ծնած ձագերը ամբողջ օրը սնունդի պէտք ունին: Հոգատար ծնողքն ալ ստիպուած է մշտապէս կեր (միջատներ կամ սերմեր) ապահովել անոնց:

Ձագերը շատ արագ կ'աճին եւ մօտաւոր երկու շաբաթ ետք անոնք արդէն կը սկսին բոյնէն դուրս գալ:

